ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2015թ. թիվ 2-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ԹԻՎ 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1405-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 11-ի թիվ 77-Ա որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բժշկական կազմակերպություններ ուղեգրող մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ մարզպետարանի հանձնաժողով) կազմը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հանձնաժողովին՝

1) կազմակերպել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված ուղեգրերի ձևաթղթերի ստացման գործընթացը ՀՀ Լոռու մարզպետարանի հանձնաժողովի կողմից ներկայացված դիմումի (համաձայն N 3 ձևի) հիման վրա:

2) կազմակերպել ուղեգրերի ձևաթղթերի հատկացման գործընթացը պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններից հավաքագրված հայտերի (համաձայն N 2 ձևի) հիման վրա:

3) տրամադրվող ուղեգրերի ձևաթղթերի հաշվառման նպատակով կազմել և վարել հաշվառման գրանցամատյան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատած ձևին համապատասխան:

4) կազմակերպել սխալ լրացված և քաղաքացիներին չտրամադրված, ինչպես նաև խոտանված ուղեգրերի հաշվառման և վերադարձման գործընթացը՝ կազմված ակտի հիման վրա:

5) կազմակերպել ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններից նախորդ եռամսյակում քաղաքացիներին տրամադրված ուղեգրերի, խոտանված ուղեգրերի և դեռևս չօգտագործված

ուղեգրերի ձևաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկանքի տրամադրումը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:

6) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը համապատասխանաբար ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ եռամսյակում քաղաքացիներին տրամադրված ուղեգրերի, խոտանված ուղեգրերի և դեռևս չօգտագործված ուղեգրերի ձևաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկանք՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված ձևի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հունվարի 15
ք.Վանաձոր